

Ա. Սուրիայան

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԲԱՌԱՑԱՆԿԻ
ՈՒ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁԸ

Սովետահայ բառարանագրության ամենահրատապ խնդիրն է կազմել արդի հայերենի բացատրական բառարան:

Չնայած հայ բառարանագրության հարուստ տրադիցիաներին, նրա տեսական հարցերը մեզ մոտ պատշաճ ուշադրության չեն արժանացել: Ելնելով հայ բառարանագրության հարուստ փորձից, մեր լեզվաբանները արդի հայերենի բացատրական բառարան կազմելուց առաջ պետք է մշակեն բառարանագրության տեսության համար կարևորություն ունեցող՝ բառերի ընտրության և բառացանկի կազմության, դարձվածաբանության ընտրության, բառի քերականական և ոճական բնութագրման, ինչպես նաև բառահոգվածի կազմության ու բառի մեկնության կայուն եղանակների մշակման և այլ բազմապիսի հարցեր:

Արդի հայերենի բացատրական բառարանի կազմության համար էական նշանակություն ունի հայ գրականության համաբարբառը: Հայ գեղարվեստական և դիտական գրականության, մամուլի և հրատարակախոսության համարաբարբառը ոչ միայն հայ բառարանագրության հիմքն է, այլև մեծ օգուտ կարող է տալ հայոց լեզվի գիտական բազմակողմանի ուսումնասիրությանը:

Գծախտարար, մինչև օրս հայերենագիտության ոլորտից անթույլատրելի կերպով զրկվել է հայոց լեզվի հետազոտության կենսական հիմքը կազմող այդ կարևորագույն աշխատանքը: Լեզվի ինստիտուտը այդ ուղղությամբ դեռ իր առաջին քայլերն է անում: Հայ գրականության համաբարբառի կազմության գործը հեշտ չէ. այն պահանջում է տասնյակ տարիների բազմամարդ կոլեկտիվի տրնաջան աշխատանք: Միաժամանակ չի կարելի անտեսել անցյալի հայերեն բացատրական և թարգմանական բառարանների հարուստ փորձը:

Այժմ սուր պահանջ է զգացվում մի այնպիսի բառարանի, որ պարունակի ժամանակակից հայոց գրական լեզվի ընդհանուր գործածական բառապաշարը, ինչպես նաև գործածական դարձվածքները և տիպական բառակապակցությունները: Այդպիսի բառարանի կազմությանը առաջին հերթին մեծապես կարող են օգտակար լինել անցյալում լույս տեսած հայերենի բացատրական բառարանները: Հայերենը հարուստ է բացատրական բառարաններով, որոնք իրենց ծավալով և առանձնահատկություններով շատ բազմազան են:

Առանձնապես անհրաժեշտ է նշել Նոր հայկազյան բառարանը¹, որը բազմապիսի է երկու մեծագիր հատորներից: Մոտ 120 տարի առաջ լույս տեսած այդ հոյակապ բառարանը ամփոփում է գրարարի բառապաշարը՝ իր բոլոր խմբատներով և իմաստային նրբերանգներով, գրաբարյան ոճերով ու դարձ-

¹ Գ. Ավետիսյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—1837:

վածքներով, քերականական նշումներով, հաճախ ստուգարանական գանաղանցյուններով, ինչպես նաև տեքստուալ օրինակներով: Յուրաքանչյուր բառի դիմաց տալով նրա հունական, լատինական և թուրքական համանշանակները, իշյալ բառարանը դառնում է համարյա նաև հայերեն-լատին-հունարեն-թուրքերեն բազմալեզվյան բառարան:

Արևմտահայ գրական լեզվի համար երկու հրատարակչամբ լույս է տեսել Ս. Քարամաճյանի բացատրական պատկերազարդ բառարանը¹:

Արդի հայերենի բացատրական բառարանի կազմության աշխատանքների համար առանձնապես կարևոր է Սա. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», որովհետև այն ամփոփում է նախկինում լույս տեսած հայերեն բացատրական և մասամբ թարգմանական բառարաններում պարունակված բառասլաշարը, ինչպես նաև ժամանակակից հայերենի բառային կազմի զգալի մասը՝ ոճական և քերականական նշումներով, դարձվածաբանությամբ, բառերի հին և արդի նշանակություններով ու նրբերանգներով: Անհամեմատ հարուստ է Մալխասյանցի բառարանի բառացանկը հայերեն նախորդ բացատրական բառարանների համեմատությամբ:

Պարունակելով մոտ 120 հազար բառ և դարձվածք, Մալխասյանցի բառարանի բառացանկը փաստորեն հարստացել է ի հաշիվ ժամանակակից հայոց լեզվի և բարբառային բառերի, ինչպես նաև ոուսերենի միջոցով կատարված փոխառությունների: Չափազանց մեծ արժեք է ներկայացնում սույն բառարանի դարձվածաբանությունը: Ընդգրկելով գրարարի ոճերն ու դարձվածքները, Սա. Մալխասյանցի բառարանը միակն է հայերեն բացատրական բառարաններից, որտեղ ամբողջացվել է արդի հայերենի և մասնավորապես ժողովրդական խոսակցական լեզվի ու դարձվածքների հարստությունը:

Արդի հայերենի բացատրական բառարանը կազմելիս՝ հետազայում թերութուններից խուսափելու նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշիվառնել Սա. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» սպեցիֆիկ առանձնահատկությունները և աչրի բնկնող թերութունները:

ա) Սա. Մալխասյանցի բացատրական բառարանի բառացանկը թեև գերազանցում է հայերեն բացատրական նախորդ բառարանների բառացանկերից, սակայն ամբողջապես չի արտացոլում ժամանակակից հայոց գրական լեզվի բառային կազմի վիճակը: Բառարանում տեղ չեն գտել վերջին տասնամյակներում դրականության և խոսակցական լեզվի մեջ մուտք գործած տասնյակ հազարների հասնող բառեր և իմաստային նրբերանգներ, որոնք բառարանագրական մշակման չեն ենթարկվել նախորդ բառարաններում:

բ) Մյուս կողմից՝ բառարանում տեղ են գտել բազմաթիվ հնացած, դուրարյան, կեղծ, նեղ բարբառային և բարբառներից եկող թուրք-թաթարական փոխառյալ բառեր, ինչպես նաև շատ թվով գոհակարանություններ:

գ) Բառարանում քիչ չեն անհաջող, անորոշ, կասկածելի և նույնիսկ սխալ մեկնությունները, և որ ամենադժուրըն է, բառերը բացատրելիս՝ հաճախ անտեսվում են նրանց այժմեական իմաստներն ու կիրառությունները:

դ) Բառերին արվող օրինակները չեն ընտրվել նախասովետական և սովետական շրջանի հայ կլասիկ գրականության ազդյուններից, այլ կազմվել է հեղինակի կողմից՝ դժուրաբանապես ազատ կազմած նախադասությունների ձևով:

¹ Ս. Քարամաճյան. նոր բարբառ հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1895, 1910:

² Սա. Մալխասյանց. հայերեն բացատրական բառարան, Երևան, 1914—1915:

ե) Ստ. Մալխասյանցի Հեղինակային լեզուն անկանոն է: Հաճախ շեղվում է արդի հայերենի ձևաբանության և շարահյուսության կանոններից:

զ) Բառարանում միօրինակ չէ ուղղագրությունը: Հեղինակը չի ենթարկվել հայոց լեզվի ուղղագրության օրենքով հաստատված նորմաներին, որով և շատ անհարմարություններ են ստեղծվել բառարանից օգտվողների համար¹:

Հայերեն բացատրական բառարաններից բացի, նորակազմ արդի հայերենի բառարանի աղբյուր կարող են ծառայել թարգմանական՝ ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարանները և հայերենին առնչվող բաղմամբով՝ ֆրանսերեն, անգլերեն և այլ բառարաններ: Առանձնապես արժեքավոր են ռուս-հայերեն բառարանները: Ստ. Մալխասյանցը իր բացատրական բառարանը կազմելիս սակավ դեպքերում է դիմել սովետական իշխանության տարիներին լույս տեսած ռուս-հայերեն և հայ-ռուսերեն տասնյակ բառարաններին: Մեր շահվումներով միայն Թ. Ավդալբեկյանի, Պ. Սոտնիկյանի, Ե. Տեբ-Մինասյանի և Վ. Փոթեջանի Լրկհատոր «Ռուս-հայերեն նոր բառարանը» պարունակում է մոտ 5 հազար հայերեն նոր բառ, որոնք տեղ չեն գտել Ստ. Մալխասյանցի բառարանում²: Անտարակույս, այդ բառարաններում առկա վերոհիշյալ կարգի բոլոր բառերը չէ որ արժեք են ներկայացնում և կարող են մտնել արդի հայերենի բառարանը: Բայց այդ բառերը հարուստ աղբյուր կարող են հանդիսանալ արդի հայերենի բացատրական բառարանի բառացանկի բնութագրի համար:

Եվ վերջապես, արդի հայերենի բացատրական բառարանի բառացանկը պետք է լրացնել նաև այն նորանոր բառերով, որոնք քաղվում են հայ կլասիկ և սովետական շրջանի գրականության լավագույն երկերից:

Վերոհիշյալ բոլոր աղբյուրները հայ գրականության նախասովետական և սովետական շրջանների կարևորագույն երկերի համարաբառի նետ գնեկայացնեն այն բազան, որի հիման վրա պետք է ծավալվեն արդի հայերենի բացատրական բառարանի կազմության աշխատանքները:

Արդի հայերենի բացատրական բառարանը պետք է ուղեցույց ծառայի հայոց գրական լեզվի բառերը, բառակապակցությունները, ոճերն ու դարձվածքները ճիշտ գործածելու համար: Սույն բառարանը պարունակելու է արդի հայերենի բառային կազմի բառերը՝ իրենց բոլոր նշանակություններով և իմաստային նրբերանգներով: Մեկնվող բառերին տրվելու են քերականական և սճական նշումներ, որոնք բնորոշելու են բառի քերականական կայուն նորմաները և գործածության սահմանները: Անհրաժեշտության դեպքում բառի տարբեր իմաստներն ու նրբերանգները պարզելու և գործածության սահմանները հաստատելու համար բերվելու են համապատասխան օրինակներ, որոնք քաղվելու են հայ գրականության լավագույն ստեղծագործություններից:

Սույն բառարանի բառացանկը կազմելիս՝ մեր կարծիքով, պետք է ղեկավարվել հետևյալ սկզբունքներով:

¹ Տե՛ս Петросян А. Б. Толковый словарь армянского языка Ст. Малхасянца. автореферат кандидатской диссертации, Ереван, 1954.

² Տե՛ս Ա. Մալխասյան, Ռուս-հայերեն բառարանագրությունը Սովետական իշխանության տարիներին, գիտերտադիտն աշխատանք, 1953, էջ 250—350:

³ Այդ աշխատանքը կատարում են Լեզվի ինստիտուտի բառարանագրական սեկտորի մի խումբ գիտաշխատողներ:

ա) Բառարանը սլետք է սլարունակի Աբովյանից մինչև մեր օրերի նայ գրական լեզվի ընդհանուր գործածական բառասլաշարը, այսինքն՝ իշյալ ժամանակաշրջանի ընթացքում գործածվող ինչպես հարակայուն րառերը, այնպես էլ վերջին շրջանում գրական լեզվում մուտք գործած նոր րառերը:

Բառարանում, առանց ընտրության, մեր կարծիքով, կարիք չկա տեղափո-
րելու 19—20-րդ դարերի հայ գրականության ամբողջ բառապաշարը: Հայ
կլասիկ գրականության լավագույն ստեղծագործությունների բառասլաշարից
սլետք է դուրս մնան նեղ բարբառային բառերը, թուրք-թաթարական փոխա-
սությունները և լեզվում քաղաքացիության իրավունք չստացած բառերը:

Վերջին տասնամյակներում արդի հայերենի զարգացման տենդենցը բառե-
րի վանազան իմաստների և գործածության սահմանների համեմատական կա-
յունացումն է:

Բառարանը, հնարավորության սահմաններում, սլետք է արտացոլի հայ
գրական լեզվի զարգացման այդ վիճակը:

բ) Մասնագիտական և տերմինաբանական բառասլաշարի ընտրության
համար վճռական նշանակություն սլետք է ունենա այս կամ այն տերմինի դերը,
նայոց լեզվում, բայց ոչ երբեք նրա կարևորությունը տվյալ գիտության և
տեխնիկայի ճյուղերի կամ հասկացողությունների տվյալ սիստեմի մեջ: Այդ
սլատճառով, դուրս թողնելով նեղ մասնագիտական բառերը, բառարանն ընդ-
գրրկելու է այն տերմինները, որոնք գործածվում են հանրակրթական դպրոցների
նամար նախատեսված համասլատասխան դասագրքերի, ինչպես նաև մամուլի
և գիտամասսայական գրականության մեջ: Այս գործում առանձնասլես մեծ
օգուտ կարող են ցույց տալ հայերենի գիտական և մասնագիտական բառա-
րանները (Քաջունի¹, Ալիշան² և այլն), ինչպես նաև ռուս-հայերեն և հայ-ռու-
սերեն տերմինաբանական բառարանները, որոնց թիվը քսանից անցնում է:

գ) Հայոց լեզվի բառային կազմը առանձնասլես հարստացել է վերջին
տասնամյակներում: Ռուսաց լեզվի ընդօրինակությամբ հայոց լեզուն իր սե-
փական օրենքներով կազմել է մեծ քանակությամբ նոր բառեր ու տերմիններ,
որոնց զգալի մասը բառարանագրական մշակման դեռ չեն ենթարկվել: Բառա-
րանում սլետք է տեղ գրավեն անշուշտ հասարակական, քաղաքական, դիտա-
տեխնիկական և գեղարվեստական գրականության ու մամուլի մեջ հանդիպող
նորակազմ այն հաջող բառերը, որոնք արդի հայերենում արդեն քաղաքացիու-
թյան իրավունք են ձեռք բերել. օր. ազդաշեփոր, ազդահայտել, ազդափող,
ալրասլահեստ, ախտականխում, ածխափոր, ականաղերծել, ակնաղննակ,
ակնարկագիր, ակումբավար, աղբարկղ, ամբարձիչ, ամսլահաս, ամսլահելիձ,
այցազգեստ, անդլուրաշարժ, անդրաժին, անժամկետ, անմեղսագիտակ,
անվճարունակ, անտառարկել, անխափոկ, անցամաս, անցորդ, աշխատամիա-
վոր, աշխատատարողություն, աշխատատարություն, ալակեղիր, ալաճել,
ալրանքաշետ, ալրանքասլտույտ, ալրելլակարդ, ալրուստալրամ, սուլօրինա-
ձին, սուտրաշրջիկ, սոողլարան, սրտահաստիք և այլն:

¹ Վալդուկի, Բաղիրք արուեստից, գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, Վենե-
տիկ, 1891—1892:

² Վ. Ալիշան, հայրուսակ, Վենետիկ, 1895:

դ) նորակազմություններից բացի, ժամանակակից հայոց լեզուն լերջին տասնամյակներում ուսերենի միջոցով մեծ թվով փոխառություններ է կատարել: Հազարների հասնող փոխառյալ այդ բառերը, բնականաբար ամրողջայես չի կարելի տեղագրել բառարանում:

Արդի հայերենի բացատրական բառարան պետք է մտնեն օտարազգի փոխառյալ այն բառերը, որոնց հայերեն համանշանակները բոլորովին չկան, իսկ եղածներն էլ անհաշող են, օր. ավիացիա, դեկրետ, դիալեկտիկա, դիկտատուրա, դոկտոր, կոալիցիա, ռադիո, սիմֆոնիա, տանկ, տեխնիկա, տրակտոր և այլն:

և) վերջին տասնամյակներում գրական լեզվում մուտք են գործել բազմաթիվ նորագույն հապավումներ, որոնց մի մասը, սակայն, լեզվում երկարատև կյանք չունենալու պատճառով, բառարանագրական արժեք չեն ներկայացնում: Բառարանում պետք է տեղ տալ ամենագործածական, կարևորագույն և կայուն հապավումներին. օր. Կենտկոմ, Կոմերիտմիություն, ՍՍՌՄ և այլն:

զ) Բարբառային բառերից բառարան պետք է մտցվեն միայն այնպիսիք, որոնք լայն չափով գործածական են և գրական լեզվում համազորներ չունեն. օրինակ՝ դահուկ, շմուշկ, տերություն, խաշմերուկ, ծերատում, կեռման, նոթեր, թեժ, միջնակ, կրնկակոխ, պոուսկ և այլն:

Արդի հայերենի բացատրական բառարանում տեղ չեն գտնելու.

ա) նեղ բարբառային այն բառերը, որոնք տեղական գործածությունից դուրս չեն գալիս և որոնց համազորները կան գրական լեզվում. օր. աբով, աժախ, ակոս, անծերք, անխեր, անլուտի, անեծքաբան, այգեռուպ, արևկել, թեշնա, թեշնա (ապա թե ոչ), թերխշուկ և այլն:

բ) Բարբառներից եկող թուրք-թաթարական այն փոխառությունները, որոնց համազորները նույնպես կան գրական լեզվում. օր. ալուշա (սալոր), ալաջախ (առնելիք, պահանջ), ամագ (ջանք, աշխատանք), անջախ (հաղիվ), բեղամաղ (դժգոհ), բեթար (վատթարագույն), բեխաբար (անտեղյակ), բեհ (կանխավձար), բիլակ (դաստակ), բուղ (սառույց), բուլ, բուլամա (շատ, առատ), բողաղ (կոկորդ), բոշ (պարապ, դատարկ), գյամ (սանձ) և այլն:

գ) Գրաբարի այն բառերը, որոնք գրական լեզվում այլևս չեն գործածվում. ինչպես, օրինակ՝ աթաշփարիստ (կրակապաշտ), ախմար (տխմար), ախնթոր, ախոնդ, ախոնդանոր, աթութայք, ազատորայր և այլն:

դ) Հայոց լեզվի շինծու բառերը, որոնք լեզվի մեջ քաղաքացիության իրավունք ձեռք չեն բերել. ինչպես, օրինակ՝ կնդրուկ (բենզոլ), հրասայլ (տանկ), ձայնասփյուռ (ռադիո), փորձաքննադատություն (էմպիրիոկրիտիցիզմ), ընկերավարություն (սոցիալիզմ), համայնավարություն (կոմունիզմ), ընկերաբան (սոցիոլոգ), շարժանկար, շարժապատկեր (կինո) և այլն:

ԳԱՐԶՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ

Արդի հայերենի բացատրական բառարանը պետք է արտացոլի ժամանակակից հայոց լեզվի ոճերի ու դարձվածքների հարստությունը: Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանության ակունքները ժողովրդական են և սերտորեն առնչվում են ժողովրդական մտածողության հետ: Բառարանում պետք է տեղ գրավեն զանազան տիպի կայուն բառակապակցությունները, դարձվածքները և իդիոմները:

ա) Պետք է վերցվեն այն դարձվածքները, որոնք լայն շահով օգտագործվել են 19—20-րդ դարերի հայ կլասիկների ստեղծագործությունների և ժամանակակից գեղարվեստական գրականության մեջ:

բ) Գրաբարյան դարձվածքներից բառարան պետք է մտնեն այնպիսիք, որոնք արդի հայերենում լայն կիրառություն ունեն. ինչպես՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձայն բարբառոտ հանապատի և այլն:

գ) Պատմական իրադարձությունների, հին հունական դիցարանության հետ կապված զանազան արտահայտություններ, որոնք տարածված են լեզվում. օր. գորդյան հանգույց, արիլլեսյան գարշապար, եզոպոսյան լեզու և այլն:

դ) Հայ բարբառներից եկող այն դարձվածքները, որոնք գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, պարբերական մամուլում և դարձել են արդի հայերենի սեփականությունը. օր.

Ականջի ետևը գցել — ձգձգել, անուշադրության մատնել, հին դարմանը քամուն տալ — հին դեպքերը վերհիշել, ուղտի ականջում քնել — որևէ բան ուշ իմանալ, քարը փեշից թափել — համաձայնել, զիջել և այլն:

ե) Հայ կլասիկ և ժամանակակից գրականության մեջ ու խոսակցական լեզվում գործածական դարձվածքները:

զ) Ժողովրդական լեզվի և հայ գեղարվեստական գրականության մեջ տեղ գտած այն իդիոմները, որոնք լայն տարածում են գտել արդի հայերենում.

է) Տերմինաբանական բնույթ կրող կայուն բառակապակցությունները, որոնք լայն շահով գործածական են արդի հայերենում. օրինակ՝ ջերմամիջուկային զենք, իմաստության ատամ, տնտեսական բլոկադա և այլն:

բ) Բայական կայուն կապակցություններ՝ հարադրյալ բայերը. օր. սրռոշում բնդունել, հաղթանակ տանել, օրինակ վերցնել, ձայն տալ և այլն:

Դարձվածաբանության ընտրության նպատակն է լինելու բառարանում տեղավորել միայն գրական լեզվի գործածական և լեզվում կայունանալու հեռանկարներ ունեցող դարձվածքները և իդիոմատիկ արտահայտությունները, դուրս թողնելով դրանցից նեղ բարբառային բնույթ ունեցողները:

Արդի հայերենի բացատրական բառարանի բառացանկի և դարձվածաբանության ընտրության առաջ քաշված սկզբունքները, իհարկե, չեն կարող վերջնական լինել: Հիշյալ հարցերի ամբողջական լուծումը առընչվում է արդի հայերենի բառապաշարի և դարձվածաբանության նորմաների ընդհանուր հարցերի լուծման և պարզաբանման հետ, որը կախված է բառարանագիրների և արդի հայերենի մասնագետների համատեղ աշխատանքից: